Կարգապահական գործ թիվ ԿԳ-16065

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 284-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/191-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՏԱՐԻԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լուսինե Տարիելի Հակոբյանի (արտոնագիր թիվ 1203) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում 31.03.2016թ. մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Բաղդասարյանի 23.03.2016թ. դիմումը, որի համաձայն «*դատարանը հիմնավորված է համարել հետևյալը. Սույն քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. մարտի 22-ին նշանակված դատական նիստին, ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան Լուսինե Հակոբյանն իր դատավարական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, չի ենթարկվել նախագահող դատավորի օրինական կարգադրություններին, ինչով խոչընդոտել և անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ*»:

Դատարանը նշել է նաև, որ Լուսինե Հակոբյանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա: Դատարանի դիմումին կից ներկայացվել է դատական սանկցիայի որոշումը, ինքնաբացարկ ներկայացնելու միջնորդությունը և կրիչը:

«Դատական սանկցիա կիրառելու մասին» 22.03.2016թ. որոշման **(այսուհետ՝ Որոշում)** համաձայն՝ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. մարտի 22-ին, ժամը 10.00-ին նշանակված դատական նիստում, ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան Լուսինե Հակոբյանն իր դատավարական պարտականությունները

կատարել է ոչ պատշաճ, չի ենթարկվել նախագահող դատավորի օրինական կարգադրություններին, ինչով խոչընդոտել և անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Որոշմամբ նշվել է նաև, որ պաշտպան Լ. Հակոբյանը դատական նիստում առանց նախագահողի թույլտվության հանդես է եկել հայտարարություններով, անտեղի առարկություններով, չի ենթարկվել նախագահողի օրինական կարգադրություններին: Նիստը նախագահողը հորդորել է առանց նախագահողի թույլտվության հայտարարություններ չանել, զգուշացրել է, որ դատական նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու համար իրավասու է որոշում կայացնել սանկցիա կիրառելու մասին, սակայն Լ. Հակոբյանը շարունակել է իր դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվել, դատավարական պարտականությունները ոչ պատշաճ կատարել, ինչի արդյունքում խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը:

Համաձայն որոշման՝ նիստը նախագահողը հորդորել է առանց նախագահողի թույլտվության հայտարարություններ չանել, զգուշացրել է, որ դատական նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու համար իրավասու է որոշում կայացնել սանկցիա կիրառելու մասին, սակայն Լ.Հակոբյանը շարունակել է իր դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվել, դատավարական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը, ինչի արդյունքում խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը:

Որոշմամբ նշվել է, որ նման վարքագիծ դրսևորելուց հետո Դատարանը՝ պաշտպան Լ. Հակոբյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված սանկցիա՝ «նախազգուշացում», միաժամանակ նրան բացատրվել է, որ դատական նիստի կարգը կրկին խախտելու և նիստի բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելու կամ նախագահողի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել ավելի խիստ սանկցիա: Սակայն, պաշտպան Լ. Հակոբյանը՝ շարունակելով նույն վարքագիծը, դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, նախագահող դատավորին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելիս հնչեցրել է *«կասկածներ են առաջացել Ձեր հոգեկան առողջության կապակցությամբ», «միջնորդում ենք Ձեր իսկ նկատմամբ դատահոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, ինչից հետո արդեն պարզ կդառնա անհրաժեշտ միջոցների հարցը, որին հնարավոր կլինի անդրադառնալ հետազոտության արդյունքներին ծանոթանալուց հետո», «կարող ենք առաջարկել «Նորքի» հոգեբուժարանը, որին կից գործում է դատահոգեբուժական հանձնաժողով», «մեր տեղեկություններով հնարավոր է բուժումն իրականացնել նաև տնային պայմաններում»* արտահայտությունները.

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը, գտել է, որ դատավորի օրինական կարգադրությունները չկատարելը, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելը և դրանով իսկ դատավարական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում է, որի պատճառով ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան՝ փաստաբան Լուսինե Հակոբյանի նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված սանկցիան՝

նրան պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ, ինչը նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտադիր հիմք է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դատարանը 22.03.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Լուսինե Հակոբյանի /արտոնագիր N 832/ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:»:*

Դատարանը 13.04.2016թ. կայացրել է «Անհստակությունն ուղղելու հարցը քննարկելու վերաբերյալ» որոշում, որով նշվել է, որ համակարգչային եղանակով տպագրության ընթացքում «Դատական սանկցիա կիրառելու մասին» 22.03.2016թ. որոշման եզրափակիչ մասում *«Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Լուսինե Հակոբյանին /արտոնագիր N 1203/...»* գրառման փոխարեն գրառվել է *«Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Լուսինե Հակոբյանին /արտոնագիր N 832/...»:*

Դատարանը գտել է, որ նշված անհստակությունը ենթակա է ուղղման և 13.04.2016թ. կայացրել է «Անհստակությունն ուղղելու հարցը քննարկելու վերաբերյալ» որոշում, որով որոշել է. *«Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով 22.03.2016թ. կայացրած որոշման եզրափակիչ մասի՝ «Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Լուսինե Հակոբյանի /արտոնագիր N 832/...» գրառումը փոխարինել «Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Լուսինե Հակոբյանի /արտոնագիր N 1203/...» գրառմամբ:*

Դատավոր Նելլի Բաղդասարյանին ներկայացված ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունում Պատասխանողը նշել է, *«15.02.20162. դատական նիստին Դ. Գյուրջյանը հայտարարել է, որ ին քնաբացարկի միջնորդություն ունի և և ժամանակ է խնդրել այն ներկայացնելու համար: Սակայն մինչ օրս ձեր ոչ ադեկվատ, ոչ հետևողական, լիարժեք չտրամաբանված գործողությունների և մասնագիտական շատ ցածր պատրաստվածության պատճառով չէր հաջողվում ներկայացնել:» ... «Միևնույն ժամանակ, ցանկանում ենք հայտնել, որ վերոնկարագրյալ իրադարձությունների արդյունքում մեզ մոտ և, կարծում ենք, նաև այս ամենի ականատեսների գերակշիռ մեծամասնության մոտ, իսկապես կասկածներ են առաջացել Ձեր հոգեկան առողջության կապակցությամբ և միգուցե դուք իսկապես ի վիճակի չեք ոչ այս գործը շարունակել, ոչ էլ ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը քննարկել և կարիք ունեք մասնագիտական օգնության կամ առնվազն տևական հանգստի (այս եզրակացությունը հիմնված է վերը նկարագրված հակասական, փոփոխական, անհավասարակշիռ, կոնֆլիկտային, նյարդային և հիստերիկ գնահատվող տարբեր դրսևորումների արդյունքում), խնդրում ենք այս ամենը ընդունել բացարձակ լուրջ, անկեղծ մղումների և մարդասիրական զգացմունքներից ելնելով ներկայացվող, և հենց այդ շրջանակներում առաջարկում ենք Ձեզ միջնորդում ենք նախ բուն, առկա խնդրի և դրա պատճառների բացահայտման նպատակով որոշում կայացնել Ձեր իսկ նկատմամբ դատահոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, ինչից*

հետո արդեն պարզ կդառնա անհրաժեշտ միջոցների հարցը, որին հնարավոր կլինի անդրադառնալ հետազոտության արդյունքներին ծանոթանալուց հետո: Այն դեպքում, եթե դուք կգտնեք, որ նման հնարավորություն օրենքը ձեզ չի ընձեռում, մենք ձեզ խնդրում ենք՝ միջնորդում ենք, վերը նշված մտահոգությունները ցրելու և նաև ձեր իսկ առողջության մասին հոգատարության շրջանակներում ուղղակի որպես բարձր գիտակցության և բարի կամքի դրսևորում, ինքնակամ այցելել որևէ հոգեբանական-հոգեբուժական կենտրոն հետազոտության նպատակով: Որպես խորհրդատվություն՝ կարող ենք առաջարկել «Նորքի» հոգեբուժարանը, որին կից գործում է դատահոգեբուժական հանձնաժողով: Որպես առավելություն, թերևս, կարելի է առանձնացնել այն, որ փաստորեն հանձնաժողովի գործունեությունը կազմակերպված է անմիջապես հոգեբուժարանի կողքին և առկա է հոսպիտալացման հնարավորություն, և, ինչպես մեզ հայտնեցին հանձնաժողովի անդամները, այժմ գործում է մինչև 24 օրյա հոսպիտալացման հնարավորություն, սակայն մոտ ապագայում կա հավանականություն, որ կընդունվի նոր կարգավորում, որի համաձայն՝ կլինի հիվանդներին մինչև 48 օր տևողությամբ հոսպիտալացնել: Մեր տեղեկություններով հնարավոր է բուժումն իրականացնել նաև տնային պայմաններում:»:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 18.04.2016թ. թիվ 123-Ա/ԿԳ-16065 որոշմամբ փաստաբան Լուսինե Տարիելի Հակոբյանի (արտոնագիր թիվ 1203) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

19.04.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը 31.05.2016թ. ներկայացրել է բացատրություն, որտեղ մասնավորապես հայտնել է, որ միջնորդություն անելու համար ինքն ունեցել է բավարար հիմքեր՝ հաշվի առնելով դատավոր Նելլի Բաղդասարյանի այդ օրվա, ինչպես նաև այդ նիստին նախորդող օրերի ընթացքում դրսևորած վարքագիծը: Պատասխանողը, որպես օրինակ նշել է, որ 26.02.2016թ. դատական նիստն սկսվելուն պես Նելլի Բաղդասարյանը հայտարարել է, որ նիստերի դահլիճում ներկա են փաստաբաններ Եգորյանը և Հակոբյանը և հարցրել, թե ինչ կարգավիճակով են իրենք մասնակցում նիստին, չնայած այն հանգամանքին, որ դեռևս երկու տարի առաջ իրենք ներկայացել են որպես տվյալ գործով ամբաստանյալ Վարդգես

Գասպարիի պաշտպաններ, ներկայացրել են իրենց վկայականները, համապատասխան լիազորագրեր, արտոնագրերի պատճեններ: Այնուհետև, դատավորը հայտարարել է ու մի տևական ժամանակ պնդել, որ եթե իրենք ցանկանում են ներգրավվել որպես պաշտպաններ, պետք է ներկայացնեն համապատասխան վկայականներ այն դեպքում, երբ վկայականներ իրենք շատ վաղուց ներկայացրել էին, և իրենց ինքնությունը վաղուց հայտնի է եղել: Ըստ Պատասխանողի, քանի որ ակնհայտ է, որ դատավորի մոտ եղել է կամ կարճաժամկետ կամ երկարաժամկետ հիշողության կորուստ, ինչը նևրոզի համախտանիշ է, իր մոտ սկսել են խորանալ կասկածներն այն մասին, որ դատավորը հոգեկան առողջության խնդիր ունի: Այնուհետև, դատավորը հայտարարել է, որ Գասպարին հրաժարվել է իրենցից որպես իր պաշտպանների և Գասպարիին հարցրել է արդյոք վերջինս համաձայն է, որ իր շահերի պաշտպանությունն իրականացնեն փաստաբան Եգորյանը և Հակոբյանը, ինչին ի պատասխան պարոն Գասպարին հայտարարել է, որ դատավորը ստում է, որ ինքը երբևէ չի հրաժարվել իր պաշտպաններից: Պատասխանողը նշել է, որ դրանից հետո դատավոր Նելլի Բաղդասարյանը, իրենց վստահորդի հայտարարությունը խեղաթյուրելով, ներկայացրել է իբր իրենց վստահորդը հայտարարել է, որ համաձայն է, որ դատարանը իրենց ներգրավի որպես պաշտպաններ, որպիսի հայտարարություն իրենց վստահորդը չի արել: Ըստ Պատասխանողի դա ևս վկայում է դատավորի մոտ հիշողության կորստի մասին: Այնուհետև, դատավորը հայտարարել է, որ իրենց վստահորդն իրենցից հրաժարվելու մասին գրավոր դիմում է ներկայացրել և հրաժարվել է այդ դիմումը իրենց ներկայացնելուց (դրա բացակայության պատճառով): Այնուհետև, Գասպարին հայտարարել է, որ իր պաշտպան Տիգրան Եգորյանը լիարժեքորեն արտահայտում է իր դիրքորոշումը ու դրանից հետո հանկարծակիորեն Նելլի Բաղդասարյանը որոշել է ոչ միայն Եգորյանին ներգրավել որպես պաշտպան, այլ չգիտես ինչու, նաև իրեն, այն դեպքում, երբ իր վերջին պատասխանում Գասպարին իրեն որևէ կերպ չի հիշատակում: Պատասխանողը նշել է, որ այս կարգի փոփոխական տրամադրությունները և վարքագիծը ևս տիպիկ են նևրոզով տառապող անձանց: Ըստ Պատասխանողի դատավորը տվել է տարօրինակ հարցեր, օրինակ՝ Եգորյանին հարցնում է, թե արդյոք իր արտոնագրում կա որևէ փոփոխություն և քանի որ արտոնագրում որևէ փոփոխություն չի արվում և հարցը անիմաստ է ըստ էության, այս հարցը ևս իր մեջ խորացրել է համապատասխան կասկածներ; Այնուհետև, Տիգրան Եգորյանին դարձյալ հարցնում է, թե արդյոք իր արտոնագրում կա որևէ փոփոխություն և, ավելացնում «Դուք լավ չեք լսում, այո՞» հարցը, որին ի պատասխան Եգորյանը հակադարձում է «ոնց որ դուք», դրանից հետո, իրեն վիրավորված համարելով, կիրառում է դատական սանկցիա նախազգուշացման տեսքով առանց հիմնավորելու իր որոշումը: Այնուհետև, Տ. Եգորյանի պահանջին այն մասին, որ պետք է ներկայացնի իր որոշումների իրավական հիմքերը, հրաժարվում է դա անելուց և հայտարարում, որ հեռանում է խորհրդակցական սենյակ Տ. Եգորյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու պահանջով Պալատ դիմելու որոշում կայացնելու, ինչից հետո Պատասխանողն անում է հետևյալ արտահայտությունը. «Մինչև Ձեր հեռանալը մենք միջնորդում են Ձեզ դատահոգեբուժականի ենթարկել» ինչից հետո դատավոր Նելլի Բաղդասարյանը շրջվում է, նայում է իրեն դժգոհ և վիրավորված դեմքի արտահայտությամբ ու հեռանում: Պատասխանողը նշել է, որ նույն օրը, ողջ նիստի ընթացքում դատավորը

դրսևորել է խիստ ոչ ադեկվատ վարքագիծ՝ շարունակաբար թույլ չտալով ոչ իրենց վստահորդ Վ.Գասպարիին, ոչ՝ իրենց հանդես գալու հայտարարություններով, առարկություններով, ինչը իրենց զրկել է պաշտպանության կողմի իրավունքներն իրականացնելու հնարավորությունից, կայացրել է սանկցիաներ իրենց վստահորդի և իր գործընկեր Տիգրան Եգորյանի նկատմամբ՝ որևէ անգամ չհիմնավորելով դրանք որևէ օրենսդրական դրույթով կամ ողջամիտ պատճառաբանությամբ, գործել է բացառապես կամայականության տիրույթում: Պատասխանողը նշել է նաև, որ 29.03.2016թ. դատավոր Նելլի Բաղդասարյանը դարձյալ դրսևորել է ոչ ադեկվատ վարքագիծ: Իրենց պաշտպանյալ Վ. Գասպարիին դատարանը հնարավորություն է տվել հանդես գալու միջնորդությամբ: Այնուհետև, դեռ միջնորդության առաջին նախադասությունը չավարտած, ընդհատել է՝ ասելով, որ չի թույլ տալիս մեր վստահորդին անել հայտարարություններ' սպառնալով դատական սանկցիայով՝ գնահատելով նրա վարքագիծը որպես դատական նիստի բնականոն ընթացքի խոչընդոտում: Դրանից հետո պաշտպան Տիգրան Եգորյանը պարզաբանել է, որ միջնորդությունը կազմված չէ միայն խնդրամասից և որ այն նաև ունի նախապատմություն, նաև իրավական, փաստական հիմքեր, ինչից հետո Նելլի Բաղդասարյանը դարձյալ կտրուկ փոխել է իր դիրքորոշումը, արձանագրել, որ ամբաստանյալն իրականում ենթարկվում է դատավորի օրինական կարգադրություններին և թույլ տվել նրան անել միջնորդությունը: Պատասխանողը կարծում է, որ սա ծայրահեղ ոչ ադեկվատ պահվածք է, խոսում է այն մասին, որ դատավորը չունի լսելու հատկություն: Թեև թույլ է տալիս կողմին հանդես գալու միջնորդությամբ, այնուհետև վայրկյաններ անց փոշմանում է, մոռանում է, որ խոսքը գնում է միջնորդության մասին ն հայտարարում, որ դատարանը թույլ չի տափս կողմին անելու հայտարարություն: Առհասարակ չունի հետևողականություն, լսելու ունակություն, իրականության պատշաճ ընկալում, տառապում է փոփոխական տրամադրություններով: Անում է անորոշ ու անհասցե դիտողություններ: Իր պարտքն է համարում արդարադատություն իրականացնելու փոխարեն լրագրողներին դիտողություններ անել մաստակ ծամելու համար, կամ ինչ-որ անորոշ շրջանակի ներկաների դիտողություն է անում նիստի ընթացքում կարգուկանոն չպահպանելու համար՝ սպառնալով հեռացնել նիստերի դահլիճից հայտնի չէ, թե ում: Ըստ Պատասխանողի ոչ ադեկվատության նշան է նաև այն, որ դատավոր Նելլի Բաղդասարյանը, չնայած այն հանգամանքին, որ Վ. Գասպարիին բազում անգամներ հայտարարել է, որ մենք երեքս ենք իր պաշտպանները, երեք անգամ որոշում է կայացրել սույն գործում որպես Վ. Գասպարիի պաշտպան հանրային պաշտպան ներգրավելու մասին: 16.03.2016թ. նա նաև որոշում է կայացրել երրորդ հանրային պաշտպան Լիանա Գասպարյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին այն բանից հետո, երբ հանրային պաշտպանը հայտարարել է, որ չի կարող հանդես գալ որպես Վ. Գասպարիի պաշտպան վերջինիս անհամաձայնության պարագայում:

Պատասխանողը հայտնել է նաև, որ 22.03.2016թ. դատավոր Նելլի Բաղդասարյանը կատարում է հետևյալ արտահայտությունները. «Հակոբյան դատարանը Ձեզ թույլ չի տալիս հանդես գալ հայտարարությամբ, դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Եգորյանը և **<u>նրա տիկինը</u>** 19:28_ սույն գործով Գասպարիի շահերի պաշտպան տիկինը Հակոբյանը շարունակում է չենթարկվել նախագահող դատավորի օրինական կարգադրություններին...», և նշել , որ միայն խիստ ոչ ադեկվատ անձը կարող է դատավորի կարգավիճակում երկու

պաշտպանների հայտարարության վերաբերյալ հայտարարել «Եգորյանը և նրա տիկինը»: Ընդ որում՝ Եգորյանին արդեն դարձնում է ամբաստանյալ, չնայած Եգորյանը դատավարության ընթացքում հանդես է գալիս որպես պաշտպան: Թեև իրենք գաղտնի չեն պահում այն փաստը, որ ամուսիններ են, այդուհանդերձ խնդրո առարկա դատավարության շրջանակներում հանդես են եկել ոչ թե որպես ամուսիններ, այլ՝ իրենց վստահորդի պաշտպաններ: Հետևաբար, ծայրահեղ ոչ ադեկվատ է, երբ դատավորը հայտարարում է «Եգորյանը և նրա տիկինը» կամ հարց է ուղղում Տ. Եգորյանին. «Ձեր տիկինը ամբաստանյալի շահերի պաշտպան տիկին Հակոբյանը, միջնորդեց ընդմիջել դատական նիստը: Միանո՞ւմ եք նրա միջնորդությանը» (ինչպես որ արել է 23.03.2016թ. նիստի ժամանակ): Ըստ Պատասխանողի ակնհայտ է, որ ադեկվատության և իրականության պատշաճ ընկալում ունեցող որևէ դատավոր դատավարության ընթացքում մի պաշտպանին մյուս պաշտպանի միջնորդությանը միանալու մասին հարց տալիս չի կարևորի այն, թե արդյոք այդ պաշտպաններն ամուսիններ են, թե՝ ոչ:

Պատասխանողը նշել է, որ դատավոր Նելլի Բաղդասարյանի կողմից իր նկատմամբ անհարգալից դիտարկված արտահայտություններից ոչ բոլորն է ինքը հնչեցրել 22.03.2016թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում: Ինքը չի հնչեցրել «կարող ենք առաջարկել «Նորքի» հոգեբուժարանը, որին կից գործում է դատահոգեբուժական հանձնաժողով», «մեր տեղեկություններով հնարավոր է բուժումն իրականացնել նաև տնային պայմաններում» արտահայտությունները, թեև դրանք իրականում տեղ են գտել իրենց ներկայացրած ինքնաբացարկի միջնորդության մեջ, այդուհանդերձ հենց Նելլի Բաղդասարյանն ՝ ընդհատելով իր կողմից միջնորդության ներկայացումը հեռացել է խորհրդակցական սենյակ իր նկատմամբ դատական սանկցիա կիրառելու, ինչի արդյունքում ինքը չի հնչեցրել այդ արտահայտությունները: Պատասխանողը նշել է, որ դա չի նշանակում, որ ինքը չէր պատրաստվում հնչեցնել դրանք, սակայն փաստ է, որ չի հնչեցրել, մինչդեռ Նելլի Բաղդասարյանին թվացել է, թե հնչեցրել է, ինչի կապակցությամբ արդեն իր մոտ կասկածներ են առաջանում, որ Նելլի Բաղդասարյանը տառապում է հալյուցինացիաներով՝ լսում է այն ինչ չկա, տեսնում է այն ինչ չկա:

Իր հետագա մասնակցությունը Նելլի Բաղդասարյանի նախագահությամբ ընթացող նույն գործով նիստերին իր մոտ վերջնականապես արմատավորել են այն համոզմունքը, որ դատավորն իրապես ունի հոգեկան առողջության խնդիր, ինչի կապակցությամբ ի վերջո կազմել են միջնորդություն և ստորագրել Գասպարիի բոլոր պաշտպաններով, սակայն այդ մասով մասնակիորեն հնչեցրել է ինքը նիստով: Պատասխանողը նշել է այն փաստը, որ թեև միջնորդությունը ստորագրել են նաև Գասպարիի պաշտպաններ Տ. Եգորյանը և Դ. Գյուրջյանը, սակայն դատավորը դատական սանկցիա կիրառել է միայն իր նկատմամբ: Ըստ Պատասխանողի մոռացկոտության և իրականության ոչ ադեկվատ ընկալման մասին է խոսում նաև այն փաստը, որ դատական սանկցիա կայացնելու որոշման մեջ սխալ է նշել իր արտոնագիրը և որոշումը կայացրել է այլ փաստաբան Լուսինե Հակոբյանի վերաբերյալ՝ չնայած այն հանգամանքին, որ իրենք դատավորին ներկայացրել են բազում փաստաթղթեր, որտեղ նշված է իր արտոնագրի համարը:

Քանի որ բժշկությունն իր հետաքրքրությունների շրջանակներում է, դատավոր Նելլի Բաղդասարյանի դրսևորած հեղհեղուկ, անհավասարակշիռ, շուտ բռնկվող, շատ անգամ հիստերիկ, երբեմն դեպրեսիվ, փոփոխական տրամադրությունները, իր ուսումնասիրություններով, համապատասխանել են նևրոզ

հիվանդության առավելապես նևրաստենիա ձևին, ինչը կարող է լինել հոգեկան առողջության կարճատև խանգարում, սակայն ինչի պարագայում դատավորի պաշտոնում պաշտոնավարելը և անձի համար բախտորոշ քրեական գործ քննելը չի կարող թույլատրելի համարվել: Այդ կապակցությամբ Պատասխանողը միջնորդությամբ դիմել է դատավոր Նելլի Բաղդասարյանին, թեև նման հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում: Պատասխանողը գտնում է, որ այս հարցը բարձրացնելու անհրաժեշտությունը կա համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի, 167-րդ հոդվածի:

Պատասխանողը նաև նշել, որ այն դեպքում, երբ դատավորն այդ պաշտոնում նշանակվելուց հետո ձեռք է բերել հոգեկան այնպիսի հիվանդություն՝ խրոնիկական կամ ժամանակավոր, որը հնարավոր չի դարձնում նրա պաշտոնավարումը մինչև պաշտոնավարման ժամկետի ընթանալը կամ ժամանակավորապես, օրենքը չի նախատեսում այնպիսի կարգավորում, որի պարագայում յուրաքանչյուր ոք, նման խնդիրներ նկատելով դատավորի մոտ կկարողանար բարձրացնել նրան բուժզննության ենթարկել պարտադրելու հարցը: Ըստ Պատասխանողի այս պարագայում մարդիկ կարող են հայտնվել մի իրավիճակում, երբ իրենց գործերով բախտորոշ դատական ակտեր կընդունեն դատավորներ, որոնք իրենց հոգեկան հատկանիշներով չեն համապատասխանում այդ պաշտոնին, մինչդեռ այդ քաղաքացիները չեն կարողանա բարձրացնել դատավորի պաշտոնում նրանց անհամապատասխանության և դատավորին բուժզննություն անցնել պարտադրելու հարցը: Քանի որ ինքը «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահն եմ, իսկ իրենց կազմակերպությունը նաև դիտարկում է պետական պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթները, այդ թվում դատավորների թեկնածուների նշանակման նպատակով անցկացվող մրցույթները այս հարցը եղել է իրենց կողմից դիտարկված և բարձրացված խնդիրների տիրույթում;

Պատասխանողը հայտնել է նաև, որ, անհասկանալի է, թե ինչու վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ դատավորի կողմից անձի նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու որոշումը չի կարող հանդիսանալ այդ մարմնին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, մինչդեռ դատավարության մասնակիցների կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացված՝ դատահոգեբուժական փորձաքննություն անցնելու մասին միջնորդությունը պետք է հիմք հանդիսանա այդ անձանց, տվյալ դեպքում՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Ըստ Պատասխանողի, եթե խնդիրն այն է, որ առաջին պարագայում այդ հնարավորությունը սահմանված է օրենքով, իսկ երկրորդ դեպքում՝ ոչ, ապա հասկանալի է, որ այստեղ գործ ունենք օրենսդրական բացի, այլ ոչ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի հետ, հակառակ դեպքում սա ոչ այլ ինչ է քան երկակի ստանդարտներ, որի արդյունքում տուժում է փաստաբանի հեղինակությունը:

Պատասխանողը հայտնել է, որ դատավոր Նելլի Բաղդասարյանը կիրառել է իր նկատմամբ դատական սանկցիա՝ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմումով ՀՀ պալատ դիմելու տեսքով միայն այն բանի պատճառով, որ ինքը հրապարակել է իրենց ինքնաբացարկի միջնորդության այն մասը, որով իրենք առաջարկել են նրան կամովին ենթարկվել

դատահոգեբանական-դատահոգեբուժական փորձաքննության, սակայն, քանի որ ամեն կերպ փորձել է քողարկել իր վիրավորանքը, որոշմամբ նաև արձանագրել է, որ Պատասխանողն այլ կերպ նաև խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը, չի ենթարկվել դատարանի օրինական կարգադրություններին և այլն: Ըստ Պատասխանողի, եթե դա այդպես լիներ, ապա նա շատ ավելի շուտ կհեռանար խորհրդակցական սենյակ համապատասխան սանկցիան կիրառելու, սակայն դա չի արել, այլ թույլ է տվել իրեն հրապարակել ինքնաբացարկի միջնորդության շարունակությունը և միայն այն ժամանակ, երբ դրանով բարձրացվել են նրա հոգեկան առողջությանը վերաբերող հարցեր, ընդհատել է Պատասխանողին և հեռացել խորհրդակցական սենյակ համապատասխան որոշումը կայացնելու: Պատասխանողը նշել է նաև, որ այդպիսին է եղել նաև որպես կողմնակի դիտորդ հանդես եկող լրատվամիջոցների ընկալումը:

Մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Պատասխանողը նշել է, որ սանկցիայի կիրառումը ինքնանպատակ չէ, այն հստակորեն հետապնդում է դատարանի գործունեության բնականոն ընթացքը ապահովելու նպատակ, հետևաբար, այն չի կարող կիրառվել դատական սանկցիայի կիրառման համար հիմք հանդիսացած գործողությունները կատարվելուց տևական ժամանակ անց որպես բոլոր դատական նիստերի ընթացքում փաստաբանի դրսևորած վարքագծի ամփոփման արդյունքում՝ նրան պատժելու միջոց: Եթե սանկցիան կիրառվում է դատարանի գործունեության բնականոն ընթացքը ապահովելու նպատակով, ապա ակնհայտ է, որ այն պետք է անմիջապես հաջորդի համապատասխան խախտման կատարմանը: Պատասխանողը հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ չի համարում առավել մանրամասն անդրադառնալ դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու, դատարանի օրինական կարգադրություններին չենթարկվելու պնդումներին, առավելևս այն պայմաններում, երբ իր կողմից ձեռնարկված բոլոր դատավարական գործողությունները եղել են իրավաչափ և բխել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով պաշտպանին վերապահված իրավունքներից: Ավելին, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1-րդ կետով ուղղակիորեն ամրագրված է, որ նույն կետով սահմանված կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Բացատրությանը կից Պատասխանողը ներկայացրել է հղումներ լրատվամիջոցների կողմից պատրաստված նյութերին իր բացատրության մեջ արծարծված հարցերի կապակցությամբ, ինչպես նաև նշել է, որ կցվում է նաև այն նիստերի վերծանությունները, որոնց հղում է կատարել բացատրությամբ, սակայն վերծանությունները չեն կցվել:

Խորհրդի նիստում Պատասխանողի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Եգորյանը ներկայացրել է և պնդել է գրավոր բացատրությունում նշված հանգամանքները: Դատարանի որոշման տեքստում նշված այն արտահայտությունները, որոնք ըստ դատավորի հիմք են հանդիսացել մտածելու, որ դրսևորվել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք իրականում չեն հրապարակվել Լուսինե Հակոբյանի կողմից դատական նիստի ընթացքում, դրանք հետագայում ներկայացված միջնորդության տեքստից են հանված և ստացվում է, որ բոլոր այն արտահայտությունները, որոնք վկայակոչվել են դատավորի կողմից որպես կարգապահական տույժի ենթարկելու միջնորդության հիմք դրանք

դատական նիստով չներկայացված և, հետևաբար խորհրդակցական սենյակում չքննարկված արտահայտություններ են և բովանդակվում են այն տեքստում, որը խորհրդակցական սենյակ հեռանալուց մոտ քսան րոպե հետո է ներկայացվել դատարանի գրասենյակ: Իր կարծիքով կարգապահական վարույթն ենթակա է կարճման միջնորդության վերաբերյալ որոշումը խորհրդակցական սենյակում կայացված չլինելու հիմքով: Պատասխանողի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանը նշել է, որ *«կասկածներ են առաջացել Ձեր հոգեկան առողջության կապակցությամբ»* արտահայտության վերաբերյալ Պատասխանողի նկատմամբ արդեն իսկ կիրառվել էր սանկցիա:

Պատասխանողի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանը նշել է, որ չկա այնպիսի արտահայտություն կատարված, որը դատարանը վկայակոչած կլիներ և որի համար դատարանն արդեն իսկ սանկցիա կիրառած չլիներ կամ դրանք քննարկած լիներ և խորհրդակցական սենյակում դրանց վերաբերյալ որոշում կայացրած լիներ:

Պատասխանողը նշել է նաև, որ ինչ վերաբերում է Պատասխանողի արտոնագրի համարի սխալ արձանագրմանը և հետագայում դրա վերաբերյալ վրիպակի ուղղման ընթացակարգով լրացուցիչ փաստաթուղթ ուղարկելու վերաբերյալ, ապա այդ ընթացակարգը սահմանված չէ ոչ քրեական դատավարության օրենսգրքով, ոչ դատական օրենսգրքով, ինքը կարծում է, որ նման հնարավորություն դատավորը չուներ:

Միևնույն ժամանակ Տիգրան Եգորյանը նշել է, որ հոգեկան առողջության կասկածների և այլնի վերաբերյալ արտահայտությունները իրավաչափ և համաչափ կասկածներ և մտահոգություններ էին, որոնք փաստաբանը տվյալ պարագայում արտահայտել է և հիմք է ունեցել իր ընկալմամբ, և առիթ ունեցել, և մտահոգություն է ունեցել և դրանք արտահայտելու անհրաժեշտություն է նկատել և դրանք չպետք է ընկալվեն որպես վիրավորական, քանի որ, եթե օրինակ փոխակերպենք հոգեկան առողջությունը ֆիզիկական առողջության, ապա նույն բանն է, որ մտահոգվես մարդու ֆիզիկական առողջությամբ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

14.06.2016թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

16.06.2016թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի դեկտեմբերի 08-ին, ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի

խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ էական փաստը՝

1. Պատասխանողի կողմից դատական նիստի ժամանակ արվել է հետևյալ արտահայտությունները՝ *«Միևնույն ժամանակ ցանկանում ենք հայտնել, որ վերոնկարագրյալ իրադարձությունների արդյունքում մեզ մոտ, և կարծում ենք նաև այս ամենի ականատեսների գերակշիռ մեծամասնության մոտ իսկապես կասկածներ են առաջացել Ձեր հոգեկան առողջության կապակցությամբ և միգուցե Դուք իսկապես ի վիճակի չեք...»,* որի համար դատարանը Պատասխանողի նկատմամբ կիրառել է նախազգուշացում:

Նշված փաստը հաստատվում է «Դատական սանկցիա կիրառելու մասին» 22.03.2016թ. որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ, թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական նիստի քննության ընթացքում, 2016թ. մարտի 22-ին տեղի ունեցած դատական նիստի ձայնագրառման կրիչով (Տե՛ս Channel 08 2016_03_22 11-33-12 02:00 րոպեից մինչև 02:57 րոպե):

2. Պատասխանողի կողմից դատական նիստի ժամանակ արվել է հետևյալ արտահայտությունները՝ «*... և որ միգուցե Դուք ի վիճակի չեք ոչ այս գործը շարունակել և ոչ էլ ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը քննարկել, և իրապես կարիք ունեք մասնագիտական օգնության կամ առնվազն տևական հանգստի: Այս եզրակացությունը հիմնված է վերը նկարագրված հակասական, փոփոխական, անհավասարակշիռ, կոնֆլիկտային, նյարդային և հիստերիկ գնահատվող տարբեր դրսևորումների արդյունքում:», որից հետո* դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ և Պատասխանողի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:

Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությամբ, թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական նիստի քննության ընթացքում, 2016թ. մարտի 22-ին տեղի ունեցած դատական նիստի ձայնագրառման կրիչով (Տե՛ս Channel 08 2016_03_22 11-33-12, 04:43 րոպեից մինչև 05:15 րոպե, Channel 07 2016_03_22 12-05-47, 00:00 րոպեից մինչև 02:00 րոպե):

3. Դատավոր Նելլի Բաղդասարյանին ներկայացված ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունում Պատասխանողը նշել է՝ «*Միևնույն ժամանակ, ցանկանում ենք հայտնել, որ վերոնկարագրյալ իրադարձությունների արդյունքում մեզ մոտ և, կարծում ենք, նաև այս ամենի ականատեսների գերակշիռ մեծամասնության մոտ, իսկապես կասկածներ են առաջացել Ձեր հոգեկան առողջության կապակցությամբ և միգուցե դուք իսկապես ի վիճակի չեք ոչ այս գործը շարունակել, ոչ էլ ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը քննարկել և կարիք ունեք մասնագիտական օգնության կամ առնվազն տևական հանգստի (այս եզրակացությունը հիմնված է վերը նկարագրված հակասական, փոփոխական, անհավասարակշիռ, կոնֆլիկտային, նյարդային և հիստերիկ գնահատվող տարբեր դրսևորումների արդյունքում), խնդրում ենք այս ամենը ընդունել բացարձակ լուրջ,*

անկեղծ մղումների և մարդասիրական զգացմունքներից ելնելով ներկայացվող, և հենց այդ շրջանակներում առաջարկում ենք Ձեզ միջնորդում ենք նախ բուն, առկա խնդրի և դրա պատճառների բացահայտման նպատակով որոշում կայացնել Ձեր իսկ նկատմամբ դատահոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, ինչից հետո արդեն պարզ կդառնա անհրաժեշտ միջոցների հարցը, որին հնարավոր կլինի անդրադառնալ հետազոտության արդյունքներին ծանոթանալուց հետո: Այն դեպքում, եթե դուք կգտնեք, որ նման հնարավորություն օրենքը ձեզ չի ընձեռում, մենք ձեզ խնդրում ենք՝ միջնորդում ենք, վերը նշված մտահոգությունները ցրելու և նաև ձեր իսկ առողջության մասին հոգատարության շրջանակներում ուղղակի որպես բարձր գիտակցության և բարի կամքի դրսևորում, ինքնակամ այցելել որևէ հոգեբանական-հոգեբուժական կենտրոն հետազոտության նպատակով: Որպես խորհրդատվություն՝ կարող ենք առաջարկել «Նորքի» հոգեբուժարանը, որին կից գործում է դատահոգեբուժական հանձնաժողով: Որպես առավելություն, թերևս, կարելի է առանձնացնել այն, որ փաստորեն հանձնաժողովի գործունեությունը կազմակերպված է անմիջապես հոգեբուժարանի կողքին և առկա է հոսպիտալացման հնարավորություն, և, ինչպես մեզ հայտնեցին հանձնաժողովի անդամները, այժմ գործում է մինչև 24 օրյա հոսպիտալացման հնարավորություն, սակայն մոտ ապագայում կա հավանականություն, որ կընդունվի նոր կարգավորում, որի համաձայն՝ կլինի հիվանդներին մինչև 48 օր տևողությամբ հոսպիտալացնել: Մեր տեղեկություններով հնարավոր է բուժումն իրականացնել նաև տնային պայմաններում:»

Նշված փաստը հաստատվում է ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.11.2016թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/1100-16 տեղեկանքի համաձայն Լուսինե Տարիելի Հակոբյանը արտոնագիրը ստացել է 15.10.2011թ.: Լուսինե Տարիելի Հակոբյանի նկատմամբ 2011-2016թթ ժամանակահատվածում երկու կարգապահական վարույթով կայացվել են որոշումներ՝

- Խորհրդի 04.02.2013թ. թիվ 4-ԿԳ որոշմամբ Լուսինե Տարիելի Հակոբյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (Կանոնագրքի 2.3.3. և 6.1 ենթակետերի հատկանիշներով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որը մարվել է.
- Խորհրդի 31.10.2016թ. թիվ ԿԳ/158-Ա որոշմամբ Լուսինե Տարիելի Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (Կանոնագրքի 4.1 կետի հատկանիշներով) կարճվել է.
- Խորհրդի 10.11.2016թ. թիվ 161-ԿԳ որոշմամբ Լուսինե Տարիելի Հակոբյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (Կանոնագրքի 4.1 կետի հատկանիշներով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որն ուժի մեջ մտած չէ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Տարիելի

Հակոբյանին Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Համաձայն Կանոնագրքի 4.1. կետի՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում <u>հարգանքով վերաբերվել դատավորին</u> և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Պալատի խորհուրդը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- *արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.*
- *արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները:*

7.1 Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել, որպես օրենքով նախատեսված սահմանափակում, հետևյալ փաստարկմամբ.

Տվյալ դեպքում, նախ և առաջ, անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված** սահմանափակման» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը***

միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով[2]:

Տվյալ դեպքում Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույնկերպ պետք է ընկալել ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և **<u>փաստաբանի վարքագծի կանոնագրքի</u>** <u>պահանջները խախտելու համար</u>.....:*

7.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով**՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **<u>այլոց պատվի ու բարի համբավի</u>** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների **<u>պաշտպանության նպատակով</u>***:

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **<u>որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում</u>**՝ <u>ի շահ</u> պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, <u>ինչպես և այլ անձանց հեղինակությունը</u> կամ իրավունքները <u>պաշտպանելու</u>, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

---

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

2 Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյո՞ք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՝ ոչ:

ա) «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ[3] բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «***որոնք նախատեսված են օրենքով»*** հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս արտահայտվելու համար պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատը՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունն էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյո՞ք Պալատը փաստաբանի արտահայտվելու ազատությունը Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանափակելով՝ իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՝ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **փաստաբանության** հեղինակության բարձրացման ուղղությամբ:* Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **փաստաբանների մասնագիտական միավորում է,** որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ փաստաբանների պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը, դրանով իսկ ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյո՞ք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը

[3] Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *Փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ*[4]:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*
Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև* ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի***[5] ***կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝* ***<u>նպաստել</u>*** *Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին,* ***<u>եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը</u>****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել*

---

[4] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):
[5] Այսուհետ՝ CCBE

ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է, որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը[6]*:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.3. Կարգապահական խախտում թույլ տալու հարցը.

Փաստաբան Լուսինե Հակոբյանը դատական նիստի ընթացքում թույլ է տվել արտահայտություններ, որոնք Պալատի խորհրդի կողմից քննարկվում են դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու տեսանկյունից:

Դատարանի առջև փաստաբանի վարքագծի վերաբերյալ սկզբունքներն ամրագրված են նաև Փաստաբանի գործունեության իրականացման ազատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 25.10.2000թ. № Rec(2000)21 հանձնարարականում, մասնավորապես երրորդ սկզբունքի 4-րդ կետի

---

[6] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

համաձայն՝ *Փաստաբանը պետք է հարգի դատական իշխանությունը և դատարանի առջև իր պարտականություններն իրականացնի այնպես, որպեսզի համապատասխանի ազգային իրավական և այլ կանոններին և մասնագիտական չափորոշիչներին:*

Խորհուրդն արձանագրում է, որ Պալատի նախագահը կարգապահական վարույթը հարուցել է երկու առիթով՝

- Դատական սանկցիայի և
- Դատավորի գրության (այդ թվում՝ ինքնաբացարկի):

Սույն դեպքում Պատասխանողը դատավորին ուղղելով «***և որ միգուցե Դուք ի վիճակի չեք ոչ այս գործը շարունակել և ոչ էլ ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը քննարկել, և իրապես կարիք ունեք մասնագիտական օգնության կամ առնվազն տևական հանգստի: Այս եզրակացությունը հիմնված է վերը նկարագրված հակասական, փոփոխական, անհավասարակշիռ, կոնֆլիկտային, նյարդային և հիստերիկ գնահատվող տարբեր դրսևորումների արդյունքում***» արտահայտությունը, անհարգալի վարքագիծ է դրսևորել, քանի որ հրապարակայնորեն կասկածի տակ է դրել մասնավորապես, դատավորի հեղինակությունը և հոգեկան առողջությունը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Հակոբյանն իրավասու չէր այսպիսի վարքագիծ դրսևորել, և վերջինիս կողմից դատավորի նկատմամբ այսպիսի անհարգալից արտահայտություններ կատարելը հակասում է Կանոնագրքի 4.1 կետի պահանջին:

Այս վարքագիծը քննարկման առարկա է դարձել դատական սանկցիայի առիթով:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն դիրքորոշմանը, որ դատարանի Որոշման տեքստում նշված այն արտահայտությունները, որոնք ըստ դատավորի հիմք են հանդիսացել մտածելու, որ դրսևորվել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, իրականում չեն հրապարակվել Լուսինե Հակոբյանի կողմից դատական նիստի ընթացքում, դրանք հետագայում ներկայացված միջնորդության տեքստից են հանված և ստացվում է, որ դրանք խորհրդակցական սենյակում չքննարկված արտահայտություններ են, ուստի Որոշումը խորհրդակցական սենյակում կայացված չէ, ապա Խորհուրդն արձանագրում է, որ դատական սանկցիայի առիթով հարուցված սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ քննարկվել են միայն այն արտահայտությունները, որոնք հնչեցվել են Պատասխանողի կողմից դատական նիստի ընթացքում՝ Պատասխանողի նկատմամբ դատարանի կողմից նախազգուշացում կիրառելուց հետո մինչև դատարանի կողմից Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու նպատակով խորհրդակցական սենյակ հեռանալու ժամանակահատվածը: Խորհուրդն արձանագրում է նաև, որ դատարանը Լուսինե Հակոբյանի նկատմամբ սանկցիա կիրառելու նպատակով հեռացել է խորհրդակցական սենյակ, այնուհետև վերադարձել է և հրապարակել է Որոշման ներածական և եզրափակիչ մասերը, ինչը հաստատվում է դատական նիստի ձայնագրառման կրիչով:

Ինքնաբացարկի միջնորդության տեքստում, փաստաբան Լուսինե Հակոբյանը ներկայացրել է հետևյալ մտքերը՝ *«Միևնույն ժամանակ, ցանկանում ենք հայտնել, որ վերոնկարագրյալ իրադարձությունների արդյունքում մեզ մոտ և, կարծում ենք, նաև*

այս ամենի ականատեսների գերակշիռ մեծամասնության մոտ, իսկապես կասկածներ են առաջացել Ձեր հոգեկան առողջության կապակցությամբ և միգուցե դուք իսկապես ի վիճակի չեք ոչ այս գործը շարունակել, ոչ էլ ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը քննարկել և կարիք ունեք մասնագիտական օգնության կամ առնվազն տևական հանգստի (այս եզրակացությունը հիմնված է վերը նկարագրված հակասական, փոփոխական, անհավասարակշիռ, կոնֆլիկտային, նյարդային և հիստերիկ գնահատվող տարբեր դրսևորումների արդյունքում), խնդրում ենք այս ամենը ընդունել բացարձակ լուրջ, անկեղծ մղումների և մարդասիրական զգացմունքներից ելնելով ներկայացվող, և հենց այդ շրջանակներում առաջարկում ենք Ձեզ միջնորդում ենք նախ բուն, առկա խնդրի և դրա պատճառների բացահայտման նպատակով որոշում կայացնել Ձեր իսկ նկատմամբ դատահոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, ինչից հետո արդեն պարզ կդառնա անհրաժեշտ միջոցների հարցը, որին հնարավոր կլինի անդրադառնալ հետազոտության արդյունքներին ծանոթանալուց հետո: Այն դեպքում, եթե դուք կգտնեք, որ նման հնարավորություն օրենքը ձեզ չի ընձեռում, մենք ձեզ խնդրում ենք՝ միջնորդում ենք, վերը նշված մտահոգությունները ցրելու և նաև ձեր իսկ առողջության մասին հոգատարության շրջանակներում ուղղակի որպես բարձր գիտակցության և բարի կամքի դրսևորում, ինքնակամ այցելել որևէ հոգեբանական-հոգեբուժական կենտրոն հետազոտության նպատակով: Որպես խորհրդատվություն՝ կարող ենք առաջարկել «Նորքի» հոգեբուժարանը, որին կից գործում է դատահոգեբուժական հանձնաժողով: Որպես առավելություն, թերևս, կարելի է առանձնացնել այն, որ փաստորեն հանձնաժողովի գործունեությունը կազմակերպված է անմիջապես հոգեբուժարանի կողքին և առկա է հոսպիտալացման հնարավորություն, և, ինչպես մեզ հայտնեցին հանձնաժողովի անդամները, այժմ գործում է մինչև 24 օրյա հոսպիտալացման հնարավորություն, սակայն մոտ ապագայում կա հավանականություն, որ կընդունվի նոր կարգավորում, որի համաձայն՝ կլինի հիվանդներին մինչև 48 օր տևողությամբ հոսպիտալացնել: Մեր տեղեկություններով հնարավոր է բուժումն իրականացել նաև տնային պայմաններում:»: Ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու փաստաբան Լուսինե Հակոբյանի վարքագիծը քննարկման առարկա է դարձել դատավորի գրավոր դիմումի առիթով:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Տարիելի Հակոբյանը անհարգալի վարքագիծ է դրսևորել, քանի որ հրապարակայնորեն կասկածի տակ է դրել մասնավորապես դատավորի հեղինակությունը և հոգեպես առողջ լինելու հանգամանքը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Հակոբյանն իրավասու չէր այսպիսի վարքագիծ դրսևորել, և վերջինիս կողմից դատավորի նկատմամբ այսպիսի անհարգալից արտահայտություններ կատարելը ևս հակասում է Կանոնագրքի 4.1 կետի պահանջին:

7.4. Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը,*

մեղքի աստիճանը, առկա փույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Պալատի խորհուրդը, հաշվի առնելով Լուսինե Տարիելի Հակոբյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ Լուսինե Հակոբյանի նկատմամբ պետք է կիրառել խիստ նկատողություն տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Պալատի խորհրդի 05.06.2016թ. թիվ 16/8 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստերի վարման ներքին ընթացակարգի 8.6.-րդ ենթակետի պահանջներով,

Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Լուսինե Տարիելի Հակոբյանին (արտոնագիր թիվ 1203) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Լուսինե Տարիելի Հակոբյանի (արտոնագիր թիվ 1203) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պատասխանողին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի անդամ՝ Նելլի Հարությունյան